

# Ն Օ Թ Ե Ի Ն Ի Շ

Բազմալիկայի «Ռեխտաբոր»-ին կը զգացնենք սիրով թէ Գրիտոսոսի խաչելութեան ժԹ. դարադարձին առթիւ հրատարակուած նոյն հանդէսի տարւոյս Սեպտ - Հոկտ. միացեալ գեղարուեստական արժէքաւոր թիւերն մէջ միակ անգեղեայ կէտն էր մէկ կողմէ չկամութեան իր զգացումը՝ որ յայտնապէս կ'երեւէր Երուսաղէմի սրբավայրերուն մէջ Հայ եկեղեցւոյ վայելած առանձնաշնորհումներուն վերաբերմամբ պարզած դաղջ անտարբերութեամբը, և միւս կողմէ՝ անարդար և անպատշաճ իր կեցուածքը հանդէպ Հայ եկեղեցւոյ զաղափարին:

Յիշել Ս. Յարութեան տաճարի շրջափակին մէջ խաչգլուտի սրբավայրը, և խօսքն իսկ չընել հոն կանգնած հայապատկան և հայկական Ս. Լուսաւորչի եկեղեցիին. յիշել Ս. Կոյսին գերեզմանի սրբավայրն ի Գեթ-սեմանի և Փրկչին ծննդեան տաճարն ի Բեթղհէմ, և չօկնարկել իսկ՝ անոնց մէջ Հայ եկեղեցւոյ վայելած դարաւոր և պատուաբեր զիրքին, աւելի քան տարօրինակ է ինքնին. և այս՝ Հայու մը կողմէ՝ ինչպէս կը թուի ինքը լինել, ու Բազմալիկայի նման հայագիտական ուսումնաթերթի մը մէջ:

Գալով երկրորդ կէտին, վերի երկու բառերով միայն — անարդար և անպատշաճ — պիտի կարենայինք որակել զայն: Հայ եկեղեցւոյն պաշտօնական տիտղոսը Էջմիածնակալն չէ եղած երբեք: Գաթրճեանէ՝ կիրքով գործածուած այդ բառը իր Միաբանութիւնն իսկ չէ ընդունած. ինչպէս տեսնուած է Հ. Ա. ի մէջ Խրիմեանի, Իզմիրլեանի, Սուրէնեանցի ընտրութեան և մահուան և ներկայ Ս. Հայրապետի ընտրութեան և այլ առիթներով եղած յիշատակութեանց մէջ: Իսկ Վենետիկոյ Միսիթարեանք, որոնց հրատարակութեանց ճակատին՝ մինչև Զամչեան և աւելի յետոյ, «Ի Հայրապետութեան Հայոց Տեսնն . . .»

և և կ'արձանագրուէր, բնու համամիտ եղած չեն այդ կոչումին:

Անհատի մը, համայնքի մը կամ Հաստատութեան մը անունը ա՛յն է՝ զոր ինքը կամ իրենները տուած են իրեն, և զոր այլք նոյնութեամբ կամ թարգմանօրէն ընդունած են միշտ: Հայ ազգին Եկեղեցին ի վաղուց անտի կոչուած է Հայաստանեայց, Հայոց կամ Հայ Եկեղեցի: Այսպէս ճանչցուած է անիկա իր և այոց պատմութեան մէջ. այդպէս կոչած են զայն օտարներ, ի հնումն և այժմ. այդ է եղած իր անունը միշտ՝ կառավարութեանց, օտար եկեղեցիներու և նոյնիսկ համազգի քոյր հասարակութեանց (կաթոլիկ և բողոքական Հայերու) հետ պաշտօնական յարաբերութեանց մէջ:

Ան չի կրնար կոչուիլ Էջմիածնակալն. ոչ միայն որովհետև Հայրապետական իշխանութիւնը Վաղարշապատ կեդրոնանալէն առաջ ինքը դոյ էր արգէն իբրև Եկեղեցի, այլ նաև, որովհետև ոչ օրինական է և ոչ բանաւոր՝ ժողովուրդ մը, իբրև կրօնական համայնք, կոչել անունովը այն քաղաքին՝ ուր կը գտնուի անոր եկեղեցական իշխանութեան կեդրոնը, ապա թէ ոչ, հարկ պիտի ըլլար դեռ կոչել զայն անուններովը՝ այն վայրերուն ուր յաջորդաբար փոխադրուեցաւ Աթոռը, էջմիածինէ վերջ. կամ, աւելի հասկնալի ըլլալու համար, ըսենք ad hominem, թէ այն պարագային, աւելի արամաբանական պիտի ըլլար կոչել Հայ կաթոլիկները՝ Զրամաբեանք, Պերայականք կամ Վերիտոնականք, քանի որ այդ հասարակութեան եկեղեցական պետին բնակավայր կամ պաշտօնավայր եղած են յաջորդաբար այդ երեք վայրերը:

Բայց անարդար և անպատշաճ վարմունքէ ախորժողներ միայն իրենք զիրենք պիտի կրնային արտօնել՝ ունենալու այդպիսի ընթացք մը:

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

Օ Ր Ա Ց Ո Յ Ց

1934 ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ

ԳԻՆ 2 ՂՐՇ. ՊԱՂ.